Արձանագրություն N 4

«ԳՀԱՊՁԲ-2019/7-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«_28__»«մարտի» 2019թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝Հ.Մանուկյան

Հանձնաժողովի անդամներ՝Տ.Սաֆարյան, Վ.Մամիկոնյան, Գ.Եղիազարյան, Ա.Աղայան

Հանձնաժողովի քարտուղար՝Ա.Հարությունյան

Բացակայում էին՝

1. **«ԳՀԱՊՁԲ-2019/7-2-ԵՊԲՀ» » ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի հայտերի գնահատման մասին**

1.1 ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 44-րդ կետի համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից, էլեկտրոնային փոստի միջոցով ստացվել է հարցման մասին տեղեկատվությունը, առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների մասով, ինչպես նաև սահմանված ժամկետում մասնակիցների կողմից ներկայացվել են պահանջվող բոլոր փաստաթղթերը:

1.2 ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 46-րդ կետի համաձայն, հանձնաժողովի գնահատմանն է ներկայացվել կոմիտեից ստացված տեղեկատվությունը և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները՝ սահմանված ժամկետում գնահատելու համար:

1.3 Հայտերի գնահատման արդյունքում, բոլոր մասնակիցների փաստաթղթերը գնահատվել են բավարար, բացառությամբ «Վոլֆ Շին» ՍՊ ընկերության, որի հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիներին համախառն եկամտի հանրագումարը, ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից, հարցման մասին տեղեկատվության 0/զրո/ ՀՀ դրամ է: Համաձայն 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության, ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

1.4 ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 47-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցվել է «Վոլֆ Շին» ՍՊ ընկերությանը, առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի

կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի անունները և ստորագրությունները

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Հ.Մանուկյան

Անդամներ՝ _____ Տ.Սաֆարյան

_____ Վ.Մամիկոնյան

_____ Գ.Եղիազարյան

_____ Ա.Աղայան

Քարտուղար՝ _____ Ա.Հարությունյան